DISCLAIMER: As Member States provide national legislations, hyperlinks and explanatory notes (if any), UNESCO does not guarantee their accuracy, nor their up-dating on this web site, and is not liable for any incorrect information. COPYRIGHT: All rights reserved.This information may be used only for research, educational, legal and non-commercial purposes, with acknowledgement of UNESCO Cultural Heritage Laws Database as the source (© UNESCO).

"ՎԱՎԵՐԱՑՆՈՒՄ ԵՄ"
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ Ռ. ՔՈՉԱՐՅԱՆ

"7" հունիսի 2005 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ

19 մայիսի 2005 թվականի N 631-Ն

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՉՀԱՄԱՐՎՈՂ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԸ ԿԱՄԱՎՈՐ ՍԿԶԲՈՒՆՔՈՎ ԳՐԱՆՑԵԼՈՒ ԿԱՐԳԸ
ԵՎ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

"Մշակութային արժեքների արտահանման եւ ներմուծման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Սահմանել մշակութային արժեքների պահպանական ցուցակում պետական սեփականություն չհամարվող մշակութային արժեքները կամավոր սկզբունքով գրանցելու կարգը եւ չափորոշիչները՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՍՏՈՐԱԳՐՎԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԿՈՂՄԻՑ
2005 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 30-ԻՆ

Հավելված
ՀՀ կառավարության
2005 թվականի մայիսի 19-ի
N 631-Ն որոշման

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՉՀԱՄԱՐՎՈՂ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԸ ԿԱՄԱՎՈՐ ՍԿԶԲՈՒՆՔՈՎ ԳՐԱՆՑԵԼՈՒ ԿԱՐԳԸ
ԵՎ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

1. Սույն կարգով եւ չափորոշիչներով սահմանվում են մշակութային արժեքների պահպանական ցուցակում (այսուհետ՝ ցուցակ) պետական սեփականություն չհամարվող մշակութային արժեքները կամավոր սկզբունքով գրանցելու կարգը եւ չափորոշիչները:

2. Ցուցակում պետական սեփականություն չհամարվող մշակութային արժեքների գրանցման չափորոշիչներն են՝

ա) տեսակի կամ տիպի առանձնահատուկ լինելը,

բ) պատմական, հնագիտական, ազգագրական, գեղարվեստական, կրոնական, մշակութաբանական, արվեստաբանական կամ գիտական հատուկ հետաքրքրություն ներկայացնելը,

գ) պատմամշակութային զարգացման վկայագիր-վավերագրի նշանակություն ունենալը,

դ) ազգային պատմամշակութային ժառանգության համար կարեւոր նշանակություն ունենալը,

ե) համաշխարհային մշակութային ժառանգության համար հետաքրքրություն ներկայացնելը:

3. Ցուցակում պետական սեփականություն չհամարվող մշակութային արժեքները գրանցվում են, եթե համապատասխանում են սույն կարգի 2-րդ կետում նշված չափորոշիչներից որեւէ մեկին:

DISCLAIMER: As Member States provide national legislations, hyperlinks and explanatory notes (if any), UNESCO does not guarantee their accuracy, nor their up-dating on this web site, and is not liable for any incorrect information. COPYRIGHT: All rights reserved.This information may be used only for research, educational, legal and non-commercial purposes, with acknowledgement of UNESCO Cultural Heritage Laws Database as the source (© UNESCO).

4. Ցուցակում պետական սեփականություն չհամարվող մշակութային արժեքները գրանցվում են կամավորության սկզբունքով՝ սեփականատիրոջ (այսուհետ՝ հայտատու) ներկայացրած հայտի համաձայն:

5. Հաստատուն հայտը ներկայացնում է լիազորված պետական մարմին՝ դրան կցելով գրանցման ենթակա մշակութային արժեքի մասին փորձագիտական եզրակացության պատճենը՝ լուսանկարով, եւ նույն մշակութային արժեքի 2 գունավոր լուսանկար (13 x 18 սմ չափսի):

6. Հայտը գրանցվում է դիմումների գրանցամատյանում, որի էջերը համարակալված, կարված եւ կնքված են լիազորված պետական մարմնի կնիքով:

7. Հայտերի գրանցամատյանը համարվում է հիմնական հաշվառման փաստաթուղթ: Գրանցամատյանում գրանցման համարների հերթականությունը վերսկսվում է յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ից:

8. Հայտի գրանցման համարը տվյալ հայտատուի գործի ծածկագիրն է՝ գրանցման թվի, օրվա, ամսվա եւ տարեթվի հաջորդականությունը պարունակող նիշերով:

9. Գործը կազմվում է հայտից, փորձագիտական եզրակացության պատճենից, մշակութային արժեքի լուսանկարից եւ այլ փաստաթղթերից:

10. Գործը պահվում է անժամկետ: Այն գրանցող լիազորված պետական մարմինը պատասխանատու է հայտատուի տվյալների գաղտնիության համար:

11. Հայտի քննարկման ու գրանցման հետ կապված փաստաթղթերի ներքին շրջանառության ընթացակարգը սահմանում է լիազորված պետական մարմինը:

12. Ցուցակը կազմվում է թվայնացված տարբերակով՝ համակարգչային շտեմարանում:

Յուրաքանչյուր մշակութային արժեք գրանցվում է հաջորդական համարակալմամբ:

Մշակութային արժեքների գրանցման տվյալներն են անվանումը, անունը կամ վերնագիրը, ստեղծողը (հեղինակը), ստեղծման ժամանակը, ստեղծման վայրը, նյութը, քանակը (բաղկացուցիչ մասերը, չափերը), քաշը, վիճակը, ծածկագիրը, ծանոթագրությունը:

13. Յուրաքանչյուր տարվա ավարտից հետո համակարգչային շտեմարանում գրանցված ցուցակը տպվում, կարվում եւ կնքվում է՝ կազմելով պետական սեփականություն չհամարվող մշակութային արժեքների տվյալների գրանցամատյանի մաս:

14. Յուրաքանչյուր տարվա ավարտից հետո տվյալ տարում գրանցված ցուցակն առանձին գրքույկով տպագրվում է ծառայողական օգտագործման համար:

15. Սեփականատիրոջը տրվում է ցուցակում մշակութային արժեքի գրանցման մասին տեղեկանք՝ լուսանկարով: Տեղեկանքի ձեւն ու տալու կարգը հաստատում է լիազորված պետական մարմինը:

16. Մշակութային արժեքի մասին տեղեկությունների փոփոխությանը վերաբերող նշումը կատարվում է ցուցակի "Ծանոթագրություն" սյունակում:

UNESCO Cultural Heritage Laws Database (Copyright and Disclaimer apply)